Կ-196-14.03.2022-ՏՏԳՇ-011 ***Երկրորդ ընթերցում***

լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2005 թվականի հոկտեմբերի 24-ի Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասը «է» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «է1», «է2», «է3», «է4», «է5», «է6», «է7» և «է8» կետերով.

«է1) խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգի սահմանումը.

է2) արտադրական նշանակության անտառներում անտառավերականգնման հատումների իրականացման կարգի սահմանումը.

է3) անտառային ծառատեսակների հատման տարիքի սահմանումը.

է4) պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգի սահմանումը.

է5) հատատեղերի հատկացման կարգի հաստատումը.

է6) անտառների պետական մոնիթորինգի իրականացման կարգի սահմանումը.

է7) Հայաստանի Հանրապետության պետական անտառներում հրդեհային անվտանգության կանոնների հաստատումը.

է8) Հայաստանի Հանրապետության անտառային քաղաքականության, ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի հաստատումը.»:

Հոդված 2. Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասը «ե» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ե1», «ե2», «ե3», «ե4» և «ե5» կետերով.

«ե1) անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի սահմանումը.

ե2) անտառների կայուն կառավարման չափորոշիչների և ցուցանիշների հաստատումը.

ե3) անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերի և դրանց տրամադրման կարգի հաստատումը.

ե4) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի ցանկի հաստատումը.

ե5) արտակարգ իրավիճակների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևի սահմանումը.»:

Հոդված 4. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «հրահանգը» բառը փոխարինել «կարգը» բառով:

Հոդված 5. Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը, 30-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Անտառի վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելման աշխատանքներն իրականացվում են սույն օրենսգրքի ու խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգի համաձայն:»:

Հոդված 7. Օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում «անտառավերականգնման հրահանգի» բառերը փոխարինել «անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «անտառապատման հրահանգին» բառերը փոխարինել «անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 45-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անտառահատման տոմսը և անտառային տոմսը հատուկ հաշվառման ենթակա փաստաթղթեր են:»:

Հոդված 10. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 2005 թվականի հոկտեմբերի 24-ի Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 6-

րդ հոդվածի 1-ին մասը «է» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «է1», «է2», «է3», «է4», «է5», «է6», «է7» և «է8» կետերով.

«է1) խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգի սահմանումը.

է2) արտադրական նշանակության անտառներում անտառավերականգնման հատումների իրականացման կարգի սահմանումը.

է3) անտառային ծառատեսակների հատման տարիքի սահմանումը.

է4) պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգի սահմանումը.

է5) հատատեղերի հատկացման ~~և տեղազննման~~ կարգի հաստատումը.

է6) անտառների պետական մոնիթորինգի իրականացման կարգի սահմանումը.

է7) Հայաստանի Հանրապետության պետական անտառներում հրդեհային անվտանգության կանոնների հաստատումը.

է8) Հայաստանի Հանրապետության անտառային քաղաքականության, ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի հաստատումը.»:

Հոդված 2. Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~2~~ 3. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասը «ե» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ե1», «ե2», «ե3», «ե4»~~,~~ և «ե5» ~~և «ե6»~~ կետերով.

«ե1) անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի սահմանումը.

ե2) անտառների կայուն ~~անտառա~~կառավարման չափորոշիչների և ցուցանիշների հաստատումը.

ե3) անտառահատման տոմսի և անտառային տոմսի օրինակելի ձևերի և դրանց տրամադրման կարգի հաստատումը.

~~ե4) անտառակառավարման ազգային տեղեկատվական համակարգի վարման կարգի հաստատումը.~~

ե~~5~~4) տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ ոչ արտադրական նպատակներով անվճար թափուկ վառելափայտ ձեռք բերելու արտոնություն ստացող՝ անտառների անմիջական հարևանությամբ գտնվող բնակավայրերի ցանկի հաստատումը.

ե~~6~~5) արտակարգ իրավիճակների ոլորտում լիազոր մարմնի հետ համատեղ անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևի սահմանումը.»:

Հոդված ~~3~~ 4. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «հրահանգը» բառը փոխարինել «կարգը» բառով:

Հոդված ~~4~~ 5. Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը, 30-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~5~~ 6. Օրենսգրքի 24-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Անտառի վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելման աշխատանքներն իրականացվում են սույն օրենսգրքի ու խնամքի և սանիտարական հատումների իրականացման կարգի համաձայն:»:

Հոդված ~~6~~ 7. Օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում «անտառավերականգնման հրահանգի» բառերը փոխարինել «անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի» բառերով:

Հոդված ~~7~~ 8. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «անտառապատման հրահանգին» բառերը փոխարինել «անտառավերականգնման և անտառապատման իրականացման կարգի» բառերով:

Հոդված ~~8~~ 9. Օրենսգրքի 45-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Անտառահատման տոմսը և անտառային տոմսը հատուկ հաշվառման ենթակա փաստաթղթեր են:»:

Հոդված ~~9~~ 10. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին և ~~2~~ 3-րդ հոդվածներով նախատեսված իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-196-14.03.2022-ՏՏԳԾ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**1-ին հոդված**	1. «Հայաստանի Հանրապետու-թյան» բառերը գրել «հոկտեմբերի 24-ի» բառերից հետո՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը, 2. «է5»-րդ կետից հանել «և տեղազննման» բառերը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատատեղի հատկացման համար կատարում են	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

			հատկացվող անտառամասերի՝ բնական պայմաններում ուսումնասիրում, տեղազննում և հաշվեգնահատում (ինչը ամրագրված է նաև ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1072-Ն որոշման Հավելվածի 3-րդ կետով) Տեղազննումը գործընթացի մի մասն է և իրավական ակտի վերնագրում դրա ամրագրման անհրաժեշտությունը չկա: Օրենքի ընդունումից հետո վերոնշյալ որոշման մեջ կկատարվեն անհրաժեշտ փոփոխությունները:		
2.	Կառավարություն	**1-ին հոդվածից հետո լրացվող նոր 2-րդ հոդված**	Նախագիծը լրացնել նոր՝ 2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 2. Օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետը ուժը կորցրած ճանաչել», հաշվի առնելով, որ Կառավարության կողմից ընդունվող հնարավոր ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համար առանձին սահմանվող	Ընդունվել է, Նախագիծը լրացվել է նոր 2-րդ հոդվածով. Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:	Ընդունվել է

			լիազորող նորմերի առկայության պարագայում բացակայում է այդ կետի անհրաժեշտությունը:		
3.	Կառավարություն	**2-րդ հոդված (լրամշակված 3-րդ հոդված)**	**1.** «,«ե5» և «ե6» բառերը փոխարինել «և «ե5» բառերով», **2.** «ե2»-րդ կետում «կայուն անտառակառավարում» բառերը փոխարինել «անտառների կայուն կառավարում» բառերով: **3.** «ե4»-րդ կետը՝ «անտառա-կառավարման ազգային տեղե-կատվական համակարգի վարման կարգի հաստատումը» հանել, իրավակարգավորումը կամրագրվի համապատասխան կառավարության որոշման մեջ:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն: Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն, ըստ այդմ կետերի համարակալումը փոխվել է:	Ընդունվել է

4.	Կառավարություն	**8-րդ հոդված (լրամշակված 9-րդ հոդված)**	«45-րդ հոդվածի» բառերից առաջ լրացնել «Օրենսգրքի» բառը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
5.	Կառավարություն	**9-րդ հոդված (լրամշակված 10-րդ հոդված)**	2-րդ կետում՝ «2» թիվը փոխարինել «3» թվով:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է